



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

11410

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ



Ա. Լ. Ե. Շ.

ՈՒՍՏԱՆ

ՄԵՐ

№ 6

891.81

Հ - 37.

1905  
Ա. ՊԵՏԵՐՅԱՆԻ ՀՐ

Հ. Շերամակյան պատճեն. 2. հ. հ. 4.

10725

Հայա Կ. ԱՊՀ - ԵՊՀ  
25 SEP 2008  
19 NOV 2010

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՒՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

Հրատ. տիկին Զաքելի

891.71  
534

ԱՑ

## ՈՒՍՍԱՆ ՍԵՐԸ

(Թարգ. Խուսերենից)


1001  
4808

Ա. ԼԵԶԿԱ ՀԱՅԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՀՀ ՀՀ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊՈΛԻΤԻԿԱԿԱՆ ԲՈՒԺՈՒՄ  
7/11. 1922  
Ա. ԱՅԱՍԻԿՅԱՆԻ ԱՆՎԵՐ



Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ  
«ՊՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՑԻԴ»  
1905.

1990



## ՈՒՍՄԱՆ ՍԵՐԸ

Дозвол. ценз. С.-Петербургъ, 9 Ноября. 1904 г.

Ա.

Պ... գիւղի խրճիթներից մէկում ամբողչ գիշերը նրազը վառ էր — Շատ քիչ է պատահում՝ որ գիւղացիք զիշերն անընդհատ քննեն. — մի - մի անգամ նրանք պէտք է գուրս գան խրճիթից, անասուններին նայեն, ականջ դնեն, տեսնեն՝ խօմ չար մարդիկ պատերը չե՞ն քանդում ծին դողանալու, կամ հացասան կողպէքը չե՞ն կոտրել, իհարկէ եթէ այնտեղ որևէ բան կալ: Դէպէքը շատ անգամ ցոյց են առւել՝ որ այսպիսի նախագգուշութիւններ ամենի ին տւելորդ չեն:

Այս զիշեր էլ գիւղացիք գուրս էին զալիս  
ծիւրին, հացատանը նայելու և շատ էին զար-  
մանում՝ որ Մակարենք ալդքան երկար նոտել են:

Նոյնիսկ միքանիսը մօտենում էին նրանց  
պատուհանին, բայց ապակիները սառուցով  
ժամկուած էին և ոչինչ չէր երեսմա:

Հարեաններից մէկը երկու անգամ մօտեցաւ,  
առաջին անգամ չկարողացաւ մի բան տեսնել  
և ոչ էլ լսել, բայց երկրորդ անգամ նրա ա-  
կանչին հասաւ սիրտ կարատող մի սուր ճիչ:

— Հա, գրով առնի ինձ, ի՞նչպէս եղաւ որ  
մինչեւ հիմաց զիսի ընկայ, խորհրդաւոր կեր-  
պով ասաց նա. — ախար Մարեամի ցաւն է  
բանել, աղայ բէրելու օրերն են:

Ցիրաւի, Մարեամը ցաւի մէջ էր: Վաղ ե-  
րեկովից նա տանշւում էր: Փորձւած տատմէրը  
իր զիտցած բոլոր հսուները բանեցրել էր  
ծինգարերութիւնը թեթևացնելու համար,  
բայց չէր կարողացել ոչ մի օգնութիւն հաս-  
ցնել: Վերջապէս ինքն կէ էր յոյսը կտրել ու  
շփոթուել, չիմանալով՝ թէ ի՞նչ անէ՝ որ խեղճ  
կնոշ ցաւերը թեթևանան: Եթէ զիւղում՝ ալդ-  
պիսի գէպքերի համար մի ուսեալ մանկաբար-  
ձուհի լինէր՝ անշուշտ գմբախա գեղջկուհինե-  
րը շատ անգամ տղիտութեանը զոհ չէին զնայ.

բայց զիւղին ո՞վ է տուել իր գործն իմացող  
մանկաբարձուհի....

Մակարը Մարեամի ամուսինը՝ մուշտակը  
հազին նստել էր բակում և անհամբերութեամբ  
սպասում էր թէ կնոշ ցաւերը ե՞րբ պիտի  
վերջանան: Նրա երկու փոքր աղջիկները, մօր  
չարչարանքը տեսնելով՝ լացել-լացել էին և  
ապա՝ յօգնած՝ խորը քուն մտել, լուսութիւնը  
խանգարում էր միայն Մարեամի հեծեծանքը:

Վերջապէս՝ Աստուած գթաց:

Աշխարհ եկաւ մինոր Արարած:

— Օչո, տեսէք, տեսէք, կասարելու հսկայ  
է, Աստուածու աչքը վրալից անպակաս ըլնի,  
ասաց տատմէրը:

Մակարը նորածնի ճիշը լսելով՝ ներս մտաւ:

— Տատի, Աստուած ի՞նչ կամեցաւ, հար-  
ցրեց նա յուզուած ձայնով:

— Մաճկալ, Մակար, մի լաւ մաճկալ, աչ-  
քորդ լուս. դարդ էիր անում որ վար անող  
չունիս, Աստուած խնդիրուդ կասարեց:

— Համմա վար կանի, հա, հեացմունքով բա-  
ցականչեց Մակարը, փա՞ս, տես՝ ի՞նչ ձեռներ,  
ի՞նչ թիկունք ունի է...

— Ե՞ս, զգո՞ւշ աչք չը տաս երեխին, վրա-  
բէրեց տատմէրը, ուրախութիւնից զլուխը կոր-  
ցրած հօր խօսքը կտրելով. իսկ վերջինս ան-

նպատակ՝ խրձթի մէջ ման էր գալիս, ինքն էլ չիմտնալով՝ թէ ի՞նչ է ուղում:

— Ի՞շ, բաւական է ուրախանաս, խելքդ էր լոցնես, զնա՞ չուր տաքացրու, շուտով էր լուսանալ:

Մակարն առանց խօսք ասելու կատարեց տատմօր հրամանը: — Նա մենակ էր և տան գործը ինքը պիտքէ անէր: Եւ նորածին մաճկալը նրա զլիից չէր զուրս գալիս: Զրհորից չուր էր քաշում — մաճկալի մասին էր մատծում, կրակ էր անում, անասուններին էր նայում՝ աչքի առաջ գարծեալ մաճկալն էր՝ որ մօր կը թից քաշ ընկած անուշ կաթ էր ծծում:

Մակարը զահել չէր. քառասուն տարեկան կը լինէր: Նա հարուստ զիւղացի էր համարւում և ամենըն էլ զիտէին՝ որ այդ հարստութիւնը պատահմածք չէ ընկել նրա ձեռքը, այլ անքնդհատ, երկար ու գառն աշխատանքից յետոյ: Մակարը քարի պէս մարդ էր: Ծուլութիւնն ու հարբեցողութիւնը նրա աչքում ամենամեծ մեղքերն էին: Եւ պէտք էր տեսնել՝ թէ ի՞նչպիսի կատաղութեամբ էր յարձակում այն համադիւղացիների վրայ, որոնք հորկն ու առորերը չէին կարողանում իր ժամանակին՝ կանոնաւորապէս վճարել: Նրա խիստ հայեցքը վառում էր արհամարհանքի ու ա-

տելութեան բոցով, իսկ աշխատանքից կոշացած ձեռն դողդողալով փետփըտում էին երկայն, ու մօրուքը:

Մակարն իրան կատարելապէս բաղդաւոր չէր համարում, քանի որ արու զաւակ չունէր: Նրա սրտից արիւն էր կաթում, երբ մտածում էր՝ որ իր հաւաքած կարողութիւնը օտար մարդկանց — իր փեսաների ձեռքը պիտի անցնի, զուցէ իր անունն էլ չըտան, իր լիշտակին մի բարի խօսք էլ չասեն:

Նորածին տղան նրա սրտի ծանր բեռլ թեթեացնում էր: Այժմ Մակարը գիտէր՝ թէ ում համար է իր աշխատանքը, ում համար է հարկաւոր տանջուել, բերնի հայրը կտրել, գիշերն անքուն մնալ:

Հստ երեսլթին՝ Մակարի ու Մարեամի յոյսերն արդարանում էին: Խարտեաշ, ճարպիկ Ստեփանը բարձրահասակ, լայնաթիկունք, խելօք ու մտածկոտ տղամարդ դարձաւ: Ստեփանի մանկութիւնն անցաւ այնպէս՝ ինչպէս անցնում է առհասարակ բոլոր զիւղացի երեխաներինը. — միքանի անգամ ծիուց վայր ընկաւ, միքանի անգամ գետում կիսախեղդ եղաւ — մինչեւ որ ծի նստել ու լողալ սովորեց: Է՛հ, այդ բոլորն էլ այնքան գատարկ բաներ են, որ լիշել անգամ չարժէ:

Տարուսա կեանք չեն վարում Պ... զիւղացիք: Նրանք ընդհանրապէս աշխատում են զիւղի մօտ շինուած օղու և մահուդի գործարաններում:

Չմեռն Ստեփանն էլ գնաց օղու գործարանը փող աշխատելու: Նա պէտքէ գործարանի վառարանները նայէր: Ճիշտ է, թէև նրանք տանն այնքան էլ փողի կարիք չունէին, քանի որ բաւականաչափ կարողաւոր էին, բայց՝ ինչպէս ասում են՝ աւելորդ հացը մարդու փորը չի ծակիլ:

Ստեփանը տասնեռութ տարեկան դարձաւ—և նրա համար սկսեցին հարսնացու որոնել:

Այդ ժմեռն Ստեփանը շուտով չի մոռանալ: Մի անգամ, իր հերթին ութ ժամ աշխատելուց յետոյ այնաեղ գործարանումն էլ վառարանի մօտ պառկեց: Նրա քունք չէր տանում: Մի կէս ժամ կողքից - կողք գառնալուց յետոյ՝ աչքերը բացեց:

Չմրան արեկի թեք ճառագալթները նեղ պատուհանից հաղիւ էին ընկեր, բայց նրանց կարիքն էլ չկար, բանի որ վառարանի թէժ կրակը նրանց տեղն էր բոնել և պայծառ լուսաւորում էր գետնայարկը:

Վառարանից քիչ հեռու նստած էր Ստեփանի օգնականը՝ Գէորգը, տասնեհինգ տարեկան մի պատանի, որ նոյնպէս գործարան էր եկել բանելու:

Վառարանը լաւ էր վառում, խառնելու պէտք չկար և Գէորգը պարապութիւնից ձանձրանում էր: Մի - երկու անգամ թիւթիւնից ծխեց, այս էլ ծանծրացրեց նրան, վերջապէս՝ ծոցից մի զիրք հանեց ու դրեց առաջը: Շուտով գետնայարկում տարածուեց նրա կարդալու միապաղաղ ծանր՝ որին երբեմն - երբեմն խառնում էր կրակի ճարճատիւնը: Ստեփանը պառկած լսում էր Գէորգի կարգացածը՝ որ մի հեքետթ էր: Քիչ - քիչ ընթերցանութիւնը նրա համար էլ հետաքրքիր դարձաւ:

— Վահ, Գէորգ, միթէ կարդալ զիտես, զարմանքով հարցրեց նա, երբ Գէորգը զիրքը ցած դրեց և սկսեց վառարանը խառնել:

— Բա ի՞ն... հպարտութեամբ պատասխանեց Գէորգը, ի՞նչ զիրք կուզես՝ բեր, չըի պէս կարդած: Այս ասելով՝ դարձեալ նստեց ու շարունակեց կարգալը:

Ստեփանը մտածմունքի մէջ ընկաւ, «Էս ինձ ինչու կարդալ չեն սովորեցրել, ես ուրիշներից ինչով եմ պակաս...» մտածում էր նա:

— Գէորգ, այ Գէորգ, ի՞նչ կասես, կարգա-

Ար գժուա՞ր բան է, վճռական ձայնով հարցրեց  
Ստեփանը:

— Այս, Ստեփան, քրտինը կը բերի. Հա-  
նաք բան չէ, արեխ գործել չէ, պատասխա-  
նեց Գէորզը՝ զգուղով որ ինքը բարձր է նրանից:

— Իսկ ո՞րքան ժամանակում կարելի է այդ  
տեղը հասնել, հետաքրքրուեց Ստեփանը,

— Դէ՛չ, այսօրինակ՝ ես ամբողջ ձմեռը ալբ-  
բենն էի սովորում...

Երկուսն էլ լուցին:

— Տիմա որ ես ուզենամ՝ չե՞մ կարող սո-  
վորել, հարցրեց Ստեփանը:

Գէորզը նրա վրայ մի քննական հայեացք  
ծգեց, կարծես առաջին անգամն էր տեսնում  
Ստեփանին և տարակուսանքով դլուխը շար-  
ժեց:

— Ե՛չ, բարեկամ, ի՞նչ ասեմ... դու արդեն  
ծերացել ես: Ախար ես սովորելը շատ փոքր  
հասակիցս եմ սկսել:

— Իսկ եթք փորձե՞նք, հ՞ը, Գէորդ, վախ-  
փախելով հարցրեց Ստեփանը:

— Փորձե՞լ, ինչո՞ւ չէ... արի փորձենք: Բայց  
գժուար թէ մի բան դուրս գայ:

Ստեփանի աչքերը փայլեցին, նա տեղից  
վերկացաւ:

Դէ՛չ, ապա ցոյց տուր, բե՛ր, բեր, շտա-  
պեցնում էր Ստեփանը:

Գէորզը միքանի անգամ փորձեց նրան սո-  
վորեցնել, բայց փորձը յաջող չէր անցնում:

— Ախար ես ասացի՝ որ բան չի դուրս  
գալ ի՞նչու իզուր ժամանակ կորցնենք: Աւել-  
լի լու է՝ պառկիր ընիր, անքուն կը մնաս:

Քիչ մնաց Ստեփանն արտասուեր:

— Դէ՛՛, Գէորդ չտն, խնդրում եմ, մի անգամ  
էլ ցոյց տուր, միաս կը պահեմ, Աստուած  
վկայ՝ չեմ մոռանալ:

Գէորզը, թէկ ակամայ՝ ցոյց տուեց: Մին-  
չե իր հերթն հասնելը՝ Ստեփանն արդէն բա-  
ւական բան սովորել էր: Վարժապետը պառ-  
կեց ընելու, իսկ աշակերտը շարունակեց պա-  
րապել:

Այդ ժամանակից Ստեփանի համար սկսուե-  
ցին տանշանէի օրեր: Ամբողջ ութը ժամ հեր-  
թապահութիւն անելուց յետոյ՝ զեռ մի երեք  
չորս ժամ էլ ալբենն էր անգիր անում և յե-  
տոյ միայն պառկում ընելու: Ալդակսի ծանր  
աշխատանքն անշետեանք չը մնաց: Նա նիշա-  
րեց, զունատուեց, աչքերը փոսն ընկան և  
սկսեցին փայլել տենտավին կրակով: Զափազանց  
յաջողութիւնից շատ անգամ՝ աշխատանքի

ժամանակ քունն էր տանում և աչքերն ակամայ փակւում էին:

Մի անգամ երբ Ստեփանը բոլորովին անքուն էր մնացել՝ եկաւ հերթապահութեան ժամանակը. նա վառարանի առաջ նստած կարգում էր: Ակզրում կարողանում էր ուշադրութեամբ նայել վառարանին և կարգացածը կրկնել: Բայց քիչ անցնելուց յետոյ՝ թուղթն աստիճանաբար կրակի դոյն ստացաւ, կրակն ու տառերն իրար խառնեցին... Նա դուխը խոնարհեց ուսերին և բաղցը քուն մտաւ: Գիրքը ցած ընկաւ:

Այդ րոպէին ներս մտաւ կառավարիչը: Սա մի խիստ ծարդ էր և բացի այն՝ որ այդպիսի գէպերում բանւորների զլխին ամեն տեսակ հալչուանքներ էր թափում, այլև՝ քնածների երեսին մեքենայով սառը չուր էր սրբսկում:

— Ա-ա, խող, հայվան, մըթմըթաց նաքթի տակ չարանենդ ուրախութեամբ և մեքենայի բերանն ուղղելով քնած Ստեփանին՝ սկսեց պաղ չուր թափել նրա զլխին, երեսին:

Ստեփանը, բերանը բայց խրորմփում էր: Նրան թուաց՝ թէ չուրն է ընկել և խեղդում է..., աշխատում էր աչքերը բանալ, բայց զիժից չէր կարողանում:

— Բա՛, փող կըստանա՛ս... լաւ ես քնում... լուեց կառավարչի ձայնը:

Ստեփանն ուշըի է գալիս, հաղում է և սկսում է վառարանը փախտ ձգել, թրչուած զիրքն ընկնում է յատակի վրայ: Այժմ պաղ չուրն սկսում է ոչ թէ երեսին թափել, այլ ծոծրակից ներս, կոնակը երթալ: Կառավարիչն ուրախ էր՝ որ Ստեփանին բռնեց և պատժեց:

— Հը... քունդ տարել էր, հարցնում է նա նենդամիտ ժպտով:

— Էս ինչ է, այ դու խոզի նուտ, շան լակոտ, կատաղած գոչեց կառավարիչը, երբ նկատեց յատակի վրայ բնկած զիրքը: Դու էստեղ կարգալու ես եկել, թէ գործ անելու: Երկու ոռութիւ տուգանք կրասս, տեսնենք լաւ է:

Ստեփանը լուս էր, բայց եղբ կառավարիչը մտաների ծալքով վերցրեց թրչուած զիրքը և մօտեցաւ վասարանին՝ Ստեփանի արիւնը զլուխը խփեց:

— Պարոն կառավարիչ, ի՞ սէր Սատուծոյ, ի՞ սէր Քրիստոսի, զիրքը մի՛ այրէք, աւելի լաւ է՝ ի՞նձ ձեձեցէք:

— Էհէ՛, եղբայր, վրաս զանդաս կը տաս, դատարան կերթաս, ծեծելն արդելուած է, ասաց կառավարիչը հեղութեամբ և զիրքը թէժ

կրակի մէջ գցեց: Դիրքը իսկոյն ևեթ մոխիր գարծաւ:

— Եթէ էլի գիրք բերես՝ գարծեալ կայրեմ, սպառնաց նա և դուրս գնաց:

Կառավարչի դնալուց յետով Ստեփանը փորձեց գիրքն աղատել, բայց հազիւ կարողացաւ ծեռքերը ներկելու չափ մուր դուրս հանել:

— Է՛լ, Ստեփան, զրջիս գինը տասը կոպէկ է համար, յիշեցնում էր ամեն օր Գէորգը:

— Գէորգ շան՝, միքիչ սպասիր, գեռ փող չունեմ:

— Է՛լ, Երբ կունենաս, ես մինչեւ Երբ սպասեմ:

— Տօներին տուն կերթամ՝ կը բերեմ:

Բայց Գէորգը չէր ուզում սպասել և այսպիսի պայման առաջարկեց. — ի՞նքն էլ մի զոյտ կօշիկ ունէր հագին, Ստեփանն էլ, — լաւ է իրար հետ փոխել: Ստեփանը միքիչ տատանւեց, բայց վերջը համաձայնութեան եկաւ և իր՝ բոլորովին նոր կօշիկները տուեց Գէորգին, իսկ փոխարէնը ստացաւ նրան ծակ ու պատռառած կօշիկը:

— Տանեցոց ես ի՞նչ ասեմ, գարդ էր անում Ստեփանը:

— Ի՞նչ կասես՝ ասա վառարանից կրակ ընկաւ՝ ալրեց:

Ստեփանն ալդիս էլ արեց:

բայց նա նոր գիրք չկարողացաւ գնել. — թէ փող չունէր, բանի որ ոսճիկը հայրն էր ստանում և թէ գիրք գնելու տեղ չկար: Հարեւան ամենամեծ գիւղը երեք ժամուալ ճանապարհ էր, իսկ ինքը չէր կարող գործարանից հեռանալ ոչ մի րոպէ: Ուրիշին էլ յանձնարարել՝ չէր կարող, որովհետեւ օտարներից ամաչում էր, որ կը սկսէին ծաղրել՝ թէ այնպիսի ահագին աղամարդն աւելի շատ ամուսնանալու մասին պէտքէ մտածեր՝ քան թէ զրքերի վրայ: Նա իր տնեցիներից էլ վախճանում էր, որովհետեւ սրանը ոչ միայն չէին հաւանում որ Ստեփանը կարդալ է սովորում՝ ~~Այլ~~ թշնամքար էին վարւած: 3 Ք.Ճ: 1906 ՌՈՒ

— Հայրիկ, ես կարդալ եմ սովորում, մի անգամ վախճանելով ասաց Ստեփանը:

— Օչո, բարկացած բացականչեց հայրը: Ես կարդալ չգիտեմ, բայց փառք Աստծու, մի ահագին տուն եմ շինել - սարքել: Հիմա ես որ կարդալ ըլ զիտեմ՝ իմանը եմ, ինձնից լաւ մարդ ես ուզում դառնալ, համարութիւնը գլխիցդ հանի՛ր, թէ չէ... գոչեց հայրը բարկացած ծայնով:

Այն օրուանից Ստեփանն սկսեց խորածանկութիւն բանեցնել. — զրքի մասին, իհարկէ, մտածեն անգամ աւելորդ էր, ուստի սկսեց

գէսից - զէնից հին լրագիրների կտորներ հաւաքել: Եւ առհասարակ՝ ամեն մի տպած զիրք նրա համար մի գանձ էր, որը պէտք է մեծ խնամքով պահել: Թէև բան չէր հասկանում այդ թղթի կտորներից՝ որովհետեւ նրանք այնքան մանր էին՝ որ բառերը կհստա էին մնում, այնուամենայնիւ՝ Ստեփանն այդքանով էլ դոհ էր:

Քիչ-քիչ նա հաւաքեց գործարանում թափթրփած բոլոր թղթի կտորները, որոնց վրա տպած խօսք կար: Բարիկենդանին մօտ՝ արդէն բոլորը կարդացել էր: Այդ օրերն էր նաև՝ որ նա մի համարձակ ու յանդուզն միտք յղացաւ: Գնաց ուղղակի գործակատար պարոն Յովհաննէսի մօտ: Պարօն Յովհաննէսը՝ Ստեփանի կարծիքով շատ բարձր պաշտօն ունէր - նա ամեն ամիս մի ահազին գումար էր ստանում - ամբողջ երեսուն ըուբլի: Բայց մարդուն հալալ էր. - համմա զլուխ ունէր անպիտանը, համա... համրիչի վրայ այնպէս արագ հաշիւներ էր անում՝ որ նայելիս մարդու զլուխը պայտա կը գար:

Երբ Ստեփանը ներս մտաւ՝ պարօն Յովհաննէսը ծխում էր:


— Իս... ես... եկել եմ ձեզ մօտ... պարօն

Յովհաննէս, դռան շէմքից ասաց Ստեփանը կմկմալով:

— Ի՞նչ է, չըլնի՞ փող ես ուղում... Է՞ է, եղբայր, գնա՛, գնա՛, ճամփէդ շշկրուել ես, շարաթ օրուանից առաջ փող չէ կարելի ստանալ:

— Զէ... ես այդ չեմ ուղում... խօսեց Ստեփանը բոլորովին իրան կորցնելով:

— Հապա ի՞նչ ես ուղում:

— Դուք հին լրագիր կունենաք, պարու Յովհաննէս, այնպէս... տպած թղթով ՅՈՎՀԱՆՆԵՍ սակ լինի՝ միենոյն է: 

— Ինչի՞դ է հարկաւոր?

— Պափրուօզ պիտի շինեմ, խաբեց Մաքանիք:

— Դու միթէ ծխում են ՅԱՅՑԱՐԿՐԵԴ Յարդուն Յովհաննէսը:

— Հա՛, մի-մի ժամանակ ծխում եմ, քաշւելով ասաց Ստեփանը:

— Լաւ, լաւ, ահա՝ այդպիսի թուղթ մենք շատ ունենք: Իսկ ես կարծեցի թէ կարդալ զիտես ուղում ես կարդալ:

— Զէ, մեզ լիմարներիս ո՞վ պէտքէ կարդալ սովորեցնի, հառաչեց Ստեփանը:

Պարօն Յովհաննէսը նրան հին լրագիրների տասը հատ թերթ տուեց:

Ստեփանը վերցրեց թղթերը, խոնարհ զլուխ տուեց և խելքը թուցրածի պէս՝ դուրս վաղեց:

Բակում բոլոր թղթերը խնամքով ծալեց, ծոցը դրեց:

Գործարանում նա անշտծբեր սպասում էր թէ Գէորգը Երբ կը պառկի քնելու՝ որ ինքը կարողանայ ծոցից հանել իր թանկավին թրդթերը: Վերջապէս՝ լսուեց Գէորգի խրոքմիոցը:

Ստեփանը խնամքով հարթեց լրագրի մի թերթը և խորասուզուեց ընթերցանութեան մէջ: Լրագրում զրած էր՝ թէ ի՞նչպէս լեհացիք՝ ստրկութիւնից ազատուելու համար ապրաւամբուել են իրանց ճնշող տէրութեան դէմ և թէ՛ յետոյ ի՞նչ դէպքեր են պատահել: Խօսքերը Ստեփանին հասկանալի էին, բայց ամերգչ մաքից ոչինչ չէր հասկանում:

— Տէ՛ր Աստուած, ի՞նչպէս տնեմ՝ որ կարդացածը հասկանամ. չէ՞ որ կան ալնպիսի մարդիկ՝ որոնք իրանց կարդացածը բոլորը հասկանում են: Ես նրանցից ինչով եմ վատ: Չէ, ես այս թղթից ձեռք չեմ վերցնիլ մինչեւանի էութիւնը չըհասկանամ:

Նուտով բոլոր թերթերը միքանի անդամ արգեն կարդացուած էին:

9.

Զատկից յետոյ գործարանում աշխատանքը

վերջացաւ. — պէտք էր տուն գնալ: Ստեփանը՝ բոլորովին ակամայ՝ ճանապարհ ընկաւ հայրենի գիւղը:

— Օտար մարդկանցից կարողանում էի թագանել — տանեցիներից ի՞նչպէս պահեմ, մտածում էր նա սրտի կսկիծով:

Սակայն՝ սկզբներում նա կարողացաւ իր զբաղմունքները ծածուկ պահել, բայց այդ չէր կարող երկար տեւել: Մի անգամ նա գաշտացին աշխատանքի էր գնացել. մայրը նրա հին շորերը կարկատելու ժամանակ սկսեց սնդուկը խառնել և նկատեց լրազիրները:

— Այ մարդ, արի՛ տես՝ էս ի՞նչ բաներ են Ստեփանի սնդուկում, կանչեց նա ամուսնուն:

— Չե՞ս տեսնում՝ ի՞նչ են, զրքեր են... ինչպէս երեսում է զեռ այդ լիմարութիւնները գլխից չէ հանել: Թող տուն գայ՝ ես նրան ցոյց կրտամ թէ ի՞նչ է նշանակում կարդալը, առաց հայրը կատաղած:

Ստեփան՝ ուրախ և իրանից գոյն՝ տուն էր գառնում. — Նա համ ուրիշների չափ աշխատաեք էր կատարել, համ էլ՝ հանդսառութեան ժամերին բաւական կարդացել էր: Տուն հասնելով շտապով ձիերն արծակեց և վազեց դէպի սնդուկը:

— Ի՞նչ ես փնտուում, խստութեամբ հարցրեց նրան Մակարը:

Միւս շապիկս եմ ուզում հագնել, քրտնել  
եմ, հաղինըս թաց է:

— Շապիկո... բաս սա ի՞նչ է... Մակարը  
ցոյց տուեց լրադիրները:

— Այնպէս... դրանք պարոն Յովհաննէսը  
առեց, զործակատարը....

— Ի՞նչի է տուել:

— Ասում է՝ ծխախոտի կամ մի այլ բանի  
համար կը հարկաւորուին....

Մարիամի ձեռքերը սարսափից ու երկիւ-  
ղից թուլացան. —

— Ո՞վ Սուրբ Աստուածածին, գոչեց նա  
վշացած, տօ, անաստուած, հոգիա էլ ևս ծա-  
խել: Առաջ սկսել էիր կարգալ, հիմա էլ ծխել  
ևս սովորել... ստանի սիրտն ևս շահում...  
Տէր Աստուած, ախքան էլ փչանալ....

— Մալրիկ, ախար ես չեմ ծխում, Աստ-  
ուած վկայ՝ չեմ ծխում: Այդ թղթերն այնպէս  
եմ վերցրել, արդարանում էր Ստեփանը, տես-  
նելով՝ որ յօնքը շինելու փոխարէն՝ աչքն էլ  
հանեց:

— Ապա, ապա արի աեսնեմ, ասաց սրաւա-  
ցաւ մայրը և սկսեց որդու բերանից հոտ քա-  
շել: Յետոյ քըքրեց նրա բոլոր գրպանները,  
ծխախոտ, լուցիկ էր փնտում, բըքրեց ամբողջ  
հագուստը, բայց ոչինչ չը դատւ:

— Կարելի է գաշոռում՝ կամ մի այլ աեղ  
ես պահել, ուղիղն ասա:

— Զէ, Աստուած վկայ՝ չէ, Երդուեց Ստե-  
փանը և երեսը խաչ հանեց:

Մարիամը ծիրիչ հանգստացաւ: Ապա Մա-  
կարը լրադիրները տարաւ բակը, դրեց կացնի  
տակ և մանր կտրտաելուց յետոյ՝ կրակն ա-  
ծեց որ տունն ազատ լինի այդ գալթակդե-  
ցուցիչ իրերից:

Երեկոյեան Մակարն ու կինը որդու մասին  
խորհուրդ արին:

— Տէր Աստուած, քիչ էր մնացել՝ որ տղան  
կորչեր, գանդատւում էր Մարիամը: Ի՞նչ կը  
լինէր՝ եթէ չիմանալինը... Զէ, ինչ ուզում ես՝  
ասս, Մակար, Ստեփանին պէտքէ ամուս-  
նացնենք:

— Սպասենք մինչեւ աշուն, կը պսակենք,  
համաձայնուեց Մակարը:

Երբ հետեւեալ առաւօտ Ստեփանը լսեց իր  
վերաբերմամբ կայացած վճիռը՝ գանգատուեց:

— Աշնանը կը պսակենք, այլևս յիմար բա-  
ներով չես պարտպիլ, ասում էր հայրը:

— Ինչ էլ լինի, ես կարդալուց ձեռք չեմ  
մերցնիլ, վճուց Ստեփանը. — Քանի որ Աս-  
տուածոյ կամքով մի զործ սկսել եմ՝ մինչեւ վեր-  
ըլ պէտքէ հասցընեմ: Եթէ զօռով պսակելու

լինին՝ կը փախչեմ, հաւատուա կը փախչեմ, մտա-  
ծում էր նա և այդպիսի մտքերով ինքն իրան  
հանգստացնում:

Ստեփանը հասկանում էր՝ որ իրան գրքեր  
են հարկաւոր, որ հին լրագիրների ու տպած  
թղթի կտորներով շատ հեռու չի գնալ, և որ  
վերջապէս հարկաւոր է մի լաւ իմացողից  
կարգացածը հասկանալու գաղտնիքն էլ սո-  
վորիլ: Ի՞նչ անէր, ուր զնար. — գիւղում զրա-  
վաճառներ չկան, չկան և էժանագին գրքեր,  
չկան այնպիսի մարդիկ՝ որ յանձն առնեն ուս-  
ման ժարաւի գիւղացիներին սովորեցնել:

Նա շատ գէս ու գէն ընկաւ, շատ որոնեց,  
վերջապէս կարողացաւ մի դիրք գնել իրանց  
գիւղացի մի տղից, որ ուսումնարանի աշա-  
կերտ էր:

Շուտով Ստեփանը գարծեալ գործարան զր-  
նաց աշխատելու: Այս անգամ նա պէտքէ գե-  
տին փորէր: Աշխատում էր եռանդով, և իր  
բաժին գործը վերջացնելուց յետով՝ գեռ չը  
մթնած՝ մի անկիւն էր բաշւում և սկսում էր  
կարգալ իր գիրքը: Բանւորները նրան ծաղ-  
րում էին՝ որ առաւօտները՝ գեռ լուսը չը բաց-  
ուած վեր էր կենում և սկսում էր աշխատել,  
իսկ երեկոյեան՝ արել մայր չը մտած՝ հեռա-  
նում էր հանգստանալու: Ստեփանն իրան ար-

դարացնում էր, ասելով՝ որ առաւօտուայ հո-  
վին աշխատելն աւելի հեշտ է:

Աշնանը Ստեփանին պսակեցին գիւղի չքա-  
ւոր ընտանիքներից մէկի աղջկայ՝ Շողիկի հետ:

Շողիկը, նիշտ որ՝ մտասամր արդարացըեց  
ծերունիների լոյսերը: Սկզբի ամիսներում Ստե-  
փանը իր ժամանակի մեծ մասը նրա հետ էր  
անցկացնում և կարծես գրքերը մոռացել էր:  
Բայց չանցաւ երկու ամիս՝ նա սկսեց մտա-  
ծել մի բանի մասին: Վերջապէս՝ մի օր դի-  
մեց հօրը՝ որ թոյլ տայ իրան աշխատանքի  
զնալու:

— Անյաջող տարի է, համոզում էր նա հօրը,  
տունը դու և Շողիկն էլ կարող էր կառա-  
վարել իսկ ես՝ մի քսան-երեսուն ուսւմնի կաշ-  
խատեմ, փող է, հարկերը տալու ժամանակ կը  
հարկաւորուի:

Մակարը երկու մտքի էր:

— Ծխախոտ չես ծխիլ... խստութեամբ հար-  
յըրեց նա:

— Ո՞չ չեմ ծխիլ:

— Երգում արա:

Ստեփանը երդուեց:

Երեկոյեան Ստեփանն իր չահիլ կնոշ հետ  
երկար խօսակցութիւն ունեցաւ:

— Ստեփան չան, ինչի՞ ես գնում, վշտա-

յած հարցնում էր Շողիկը, ինձնից խօմ չե՞ս  
ծանձրացել:

Ստեփանը միքիչ շփոթուեց, ապա կնոջը  
երդուեցրեց՝ որ իր ասելիք գաղտնիքը ոչ ոքի  
չի լայտնիլ և յած ծալնով ասաց. —

— Ուզում եմ զրել կարդալ սովորել: Կար-  
դալ արդէն զիտեմ, այժմ ուզում եմ թուա-  
բանութիւն ու զիր էլ սովորել, իսկ տանը չի  
կարելի. Հայրիկն ու մայրիկը կը բարկանան:  
Տես, նրանց մօտ բերնիցդ խօսք դուրս չը  
թոցընես:

Շողիկը մի պահ լռեց, ապա հետաքրքրու-  
թեամբ հարցրեց:

— Իսկ դրանից վերջը ի՞նչ դուրս կը դայ...  
մի օգուտ կը լինի՞ թէ ո՞չ:

— Անպատճառ, ոգեսրութեամբ պատաս-  
խանեց Ստեփանը, միայն թէ ես աղատ կա-  
րողանալի սովորել:

— Խօմ այն ժամանակ ինձ չե՞ս մոռանալ,  
վախով հարցրեց կինը:

— Ոչ, ամենեին չեմ մոռանալ, հոգիս:

— Իսկ վերջն ի՞նչ կը դառնաս:

Ստեփանը այդ հարցի մասին ամենեին չէր  
մտածել: Նա սովորում էր միայն սովորած լի-  
նելու, զիտենալու համար:

— Տեսնե՞նք, Աստուած ինչ որ կամենալ,  
պատասխանեց նա:

— Կարելի է կը յաջողուի զրադի՞ր դառ-  
նալ, պնդում էր Շողիկը մի հաստատ բան  
լսելու լուսով:

— Ո՞վ զիտէ, կարելի է այդ էլ յաջողուի:

Այդ օրուանից Ստեփանը սկսեց մտածել՝ որ  
զրել — կարդալը ոչ միայն զրադունքի առար-  
կայ կարող էր լինել ինչպէս ինքն էր երեա-  
կալում, այլև ապրուսու ճարելու մի օգտա-  
կար միջոց:

Դ.

Ստեփանը ծառայութեան տաւ մի կալուա-  
ծաւէր աիկնոց մօտ: Նրա գործն էր՝ բակը մաք-  
րել, փայտ կոտրել և ներս տանել: Այդ բո-  
լորը առաւօտր վաղ նա արդէն կատարում էր,  
իսկ օրուայ մնացած ժամանակը բոլորովին ա-  
զատ էր: Համարեալ այդ ամբողջ ժամանակը  
նա կարդում էր, բայց դարձեալ թաքուն:

Ստեփանն այժմ կարդում էր Ռոբինզոնի  
պատմութիւնը. այդ զիրքը նա քաղաքումն  
էր լինել, երբ աիրուցու հարբած կառապանի  
փոխարէն՝ ինքն էր բաղաք գնացել: Տիրուհին

այնտեղ նրան փող էր ընծալել, որով Ստեփա-  
նը գնել էր Խօրինզօնի պատմութիւնը:

Առաջին օրերը մի յարմար տեղ էր որոնում,  
որ կարողանաւ հանդիսաւ լինել և այնպէս կար-  
դալ՝ որ մարդ չը նկատէ: Նա այդպիսի մի  
տեղ բակում գտաւ և այնուշետե՛ ամբողջ ժա-  
մերով երեսի վրայ պառկած՝ կարդում էր:

Նա աւելի ու աւելի լաւաշագիմում էր:  
Արդէն կարողանում էր ագաս կարդալ, թէև  
կէտաղրութեան մասին ոչ մի հասկացողու-  
թիւն չունէր. նոյնիսկ՝ շատ որ մտածում էր՝  
կարդացածք հասկանում էր: Բացի այդ՝ Ստե-  
փանը պատերի վրայ ածուխով դրել էր  
սովորում:

Ասում են՝ որ աշխարհում պատահմունքով  
շատ դորձ է յաշողուում: Ստեփանի վերաբեր-  
մածք էլ այդ խօսքը արդարացաւ: Գէպքի բեր-  
մունքով նա գործարանում Գէորգին հանդի-  
պեց, որից կարդալ սովորեց. դէպքի բերմուն-  
քըն էլ յաշողեցրեց նրան աւելի առաջ զնալու:

Գողերը հարեան կալուածատէր տիկնոց  
տան դուռք կոտրել և բոլոր արծաթեղէնը  
տարել էին:

Ստեփանի տիրուհին էլ վախեցաւ:  
Վերջինս ուսում առած բարեսիրա պառա-  
էր: Նա սիրում էր հասարակ մարդոց, թէև

իր հետ գործ ունեցող գիւղացիներին չէր սի-  
րում, որովհետև նրանց մէջ շատ պակասու-  
թիւններ էր նկատում. բայց պակասութիւն-  
ներ չունեցողներին՝ նա օգնում էր ու խնա-  
մում: Այդ պատճառով էլ առանձին բաւակա-  
կանութեամբ նկատում էր՝ որ Ստեփանը չի  
հարբում, ազնիւ է, բարեխղնութեամբ է կա-  
տարում իր հրամանները, և արդէն իսկ նրա  
ապագայի մասին էր մտածում: Միտքն էր  
դրէլ՝ որ առաջ նրան կառապան կը գարձնէ,  
իսկ յետոյ՝ նոյնիսկ՝ իր տան կառավարիչ, մի-  
այն՝ եթէ չը փչանալ: Համեմատելով իր բոլոր  
ծառաներին՝ տեսաւ որ ամենահաւատարիմն  
ու արժանաւորը Ստեփանն է և միայն նրան  
կարելի է հաւատալ իր տան պահպանու-  
թիւնը:

Ուստի՝ Ստեփանին տեղաւորեց իր նախա-  
սենեակում, գողերի ոտքի ձայնը կամ շշուկը  
լսէ թէ չէ՝ իսկոյն զոյդ ատրճանակներով ու  
սորով իր տիրուհուն պաշտպանէ: Այդ զէնքե-  
րը՝ որ պապէրից էին մնացել՝ ինքը՝ տիրու-  
հին յանձնեց Ստեփանին:

— Գէ՛հ, Ստեփան, տե՛ս, հաւատարմու-  
թեամբ ծառապիր, անվարծ չես մնալ:

Նախասենեակում միշտ պէտքէ նրազը վառ-  
մնար, որպէսզի աւազակները տեսնէին՝ որ պա-

Հապանը ընած չէ, իսկ ցերեկը Ստեփանը կորող էր քնել: Այդ կարգադրութեան վրայ վերշինը անասելի կերպով ուրախացաւ: Նա ամբողջ դիշերը անընդհատ կարող էր ընթերցանութեամբ պարապիլ:

Լաւ էր Ստեփանի կեանքը: Առաւորք վաղ գեռ լոյսը չը բացուած՝ նա սկսում էր սենեակները ձաքրել: Տիրուհին շատ անգամ մոռանում էր սեղանի վրայ երեկոյեան կարգացած զիրքը և երբ Ստեփանը այդպիսի զանձի էր հանդիպում՝ ինչպէս պատպակած ջրից է վրայ ընկնում՝ այնպէս էլ նա զիրքն էր խլում և սկսում կարգալ:

Մի անգամ նա ալնպէս յափշատկուեցաւ ընթերցանութեամբ՝ որ չը նկատեց՝ թէ ինչպէս արիուհին սենեակից դուրս եկաւ:

— Միթէ դու կարգալ զիտե՞ս, դարձացմամբ հարցը Ետեփանին:

— Այո՛, միքի զիտեմ, երկիւղով պատասխաննց Ստեփանը:

— Ապա կարգա:

Ստեփանը դողդոչիւն ձայնով, բայց բաւական արագ՝ կարգաց միքանի տողի:

— Լաւ է, լաւ է, ասաց տիրուհին, բայց ինչո՞ւ կէտերից յետոյ չես կանգնում:

— Ի՞նչ կէտեր:

— Ո՛չ, ստորակէտեր, վերջակէտեր, ցուցառուեց տիրուհին:

Զը զիտէի, խանում:

— Տես, ալսպէս պէտքէ կարգաս, ասաց տիրուհին և մի քանի տող ինքը կարգաց: Կրկնի՞ր:

Ստեփանը կրկնեց:

— Լաւ, իսկ զրել գիտե՞ս:

— Ո՛չ խանում, շատունց ուզում եմ սովորել, բայց սովորեցնող չկայ:

— Ճաշից յետոյ արի ինձ մօտ՝ կը սովորեցնեմ:

— Աստուած կեանք տայ, խանում, այդ բարութիւնը ամբողջ կեանքումս չեմ մոռանալ:

— Միթէ այդքան շատ ես ուզում ուսումս սատանալ, հարցը Եց տիկինը:

— Անքան, ալնքան եմ ուզում, խանում, որ չափ չկայ, բայց ծածուկ եմ սովորում, ամենքը վրաս ծիծաղում են և հայհուում:

Այդ օրից յետոյ Ստեփանը սկսեց տիրուհուց զրել սովորել և նրանից մի զրատախտակ ու քարեղրիչ նուեր սատացաւ:

Ծննդեան նախրնթաց օրը Ստեփանն անըսպասելի կերպով քննութեան ենթարկուեց: Տիրուհու հրամանով նա գործարան դնաց:

Գրասենեակում կանգնած՝ սպասում էր նա-  
մակին՝ որ գրու՞մ էր կառավարիչը նրա տի-  
բուհուն:

— Ես կարող եմ կարգալ ձեր զրածը, պար-  
ձենալով ասաց Ստեփանը կառավարչին:

— Ուղի՞ղ ես ասում, հարցրեց կառավարի-  
չը, ապա կարգա աւեսնենք, այս ի՞նչ է գրած:

Ստեփանը սաստիկ ուրախացած և յուղւած՝  
սկսեց կարգալ:

Կառավարիչը հետաքրքրուեց:

— Ապա այսաեղ մի բան դրիր:

Ստեփանը դրեց՝ «Ես կարգալ — դրել գի-  
տեմ, բայց թուաբանութիւն չփիտեմ»:

Մոտ մի ժամ կառավարիչը նրա հետ խօ-  
սում ու քննում էր:

— Ի՞նչ ես մտածում, ի՞նչ ծառայութեան  
պէտքէ մտնես, հարցրեց կառավարիչը:

— Ո՞չ մի ժառայութեան, վախվախելով  
պատասխանեց Ստեփանը, մտածելով՝ որ չը-  
լինի՞ թէ կառավարիչն ուզում է իր վրայ ծի-  
ծաղել: Միայն, ի սկը Աստուծոյ, գուք ասա-  
ցէք թէ ալժմ ես ի՞նչ պէտքէ անեմ, ի՞նչ պէտ-  
քէ սովորեմ, աղերսանըով դիմեց նա կառա-  
վարչին:

— Թուաբանութիւն, քերականութիւն պէտ-  
քէ սովորես, բայց այդ հեշտ բան չէ:

— Ոչ ինչ, ես խօմ գժուարութիւնից չեմ  
գանգատում, միայն թէ Աստուծոյ ոյժ տայ  
սովորելու:

— Իսկ սովորեցնող ունե՞ս:

— Ո՞չ, պարոն կառավարիչ:

— Տեսնում ես, ես խօմ սուտ չեմ ասում  
որ գժուար է, այնուամենացնիւ՝ փորձի՞ր: Եթէ  
շատ անհասկանալի լինի՞ արի՞ ինձ մօտ, կօգնեմ:

Այդ օրուանից Ստեփանն սկսեց թուաբա-  
նութեան վրայ մտածել, բայց գիրք չուներ:  
Տիրուհուց խնդրել՝ չը համարձակուեց, բայց  
լսել էր՝ որ ջրաղացպանը որ նախկին զինւոր  
էր, ծառայութիւնից վերադառնալիս՝ հետր  
թուաբանութեան մի գիրք է բերել: Կիւրակի  
օր դնաց այդ մարդու մօտ՝ որ դիմնակա-  
նի համբաւ էլ ուներ:

Նախկին զինւորը, կարմիր շապիկ հագած՝  
վառարանի մօտ նստել՝ թէ էր խմում: Ստե-  
փանը վրան շէճքին կանգնեց:

— Ի՞նչ ես ուզում: Հարցրեց ջրաղացպա-  
նը բրաինը սրբելով:

— Զեղնից մի խնդիրը ունիմ:

— Տեսնում եմ՝ որ խնդիրը ունես, առա-  
տեսնենք՝ ի՞նչ ես ուզում:

— Լսել եմ՝ որ գուք թուաբանութեան գիրք  
ուներ, խնդրեմ մի քիչ ժամանակով ինձ տաք:

— Առվորե՞լ ես ուղում, ի՞նչ է:

— Այո՛, պարոն շրազացպան:

— Լաւ, լաւ, ունիմ, այո՛ ունիմ թուաբանութեան զիրք... բայց գիտե՞ս ազբէ՛ր, իմ զիրքը քեզ պէս մեծ զիխանի զիւղացիների համար չէ գրած... Էդ քու խելքի բանը չէ: Ես ինքս շատ եմ քրտինք թափել նրա վրայ բայց բան չէ գուրս եկել:

— Այդ ոչի՞նչ, ես կաշխատեմ, միայն թէ զիրք ունենամ. Սատուած կօգնէ... խնդրեմ պարոն շրազացպան չըձերժէք...

Զրազացպանը մտածմունքի մէջ ընկաւ:

— Հը՞մ... տամ... բայց բարեկա՞մ, զիրքս փող արժէ, եթէ կորցնե՞ս...:

— Սատուած վկայ՝ չեմ կորցնի, երդուեց Ստեփանը, ուրախացած՝ որ գործը յաշողում է:

— Բայս... բայս... որ առնես - փախչես՝ ես քեզ որտեղից դանեմ, այ, եթէ գոտիդ գրաւ կը թողնես՝ կը տամ: Զրազացպանը շատ էր հաւանել Ստեփանի նոր գօտուն:

— Ինչու չէ... կը թողնեմ, յօժարութեամբ համածայնուեց Ստեփանը և գօտին յետ արեց:

Զրազացպանը կտկացաւ:

— Դէ՛ լաւ, լաւ, տեսնում եմ՝ որ խարեւայ չես, վերցրու առանց գրաւի, միայն տես՝ եթէ կորցրի՛ մի ոռւրի կառնեմ:

Այս տաելով բերեց բարակ փոլսաած թերթերով մի գիրք:

Ահա՛, սովորի՛ր, Սատուած յաշողութիւն տայ:

Ստեփանը նոյնպիսի եռանդով սկսեց բոլորն անզիր սովորել, բայց գրանից էլ բան գուրս չեկաւ: Մի օր, երբ դարձեալ գնաց կառավարչի մօտ՝ սա ցոլց տուեց գաղտնիքը:

Այնուհետև Ստեփանը շուտ - շուտ վազում էր գործարան ըրհասկացածը հարցնելու համար: Զատիկը ըրհասած՝ նա արդէն կարողանում էր սառւգել իր տիրուհու հաշիւները: Այնպէս որ մի անգամ նոյնիսկ կալուածատէր տիկնոչ արնատեսը ամենի առաջ խոստովանուեց՝ որ Ստեփանն իրանից ուսումնական է: Այդ խոստովանութիւնը Ստեփանի առաջին վարձատրութիւնն էր:

Ե.

Զատիկից յետով Ստեփանը տուն վերադարձաւ: Տիրուհին նրան առատորէն վարձատրեց: Մի ամբողչ կապոց հին զրբեր տուեց:

— Ահա՛, Ստեփան, ինձնից դժողով չը մնաս, արազ ըը խմես, ազնիւ եղիր՝ ինչպէս մինչեւ այժմ: Սովորի՛ր՝ կարելի է մի բան դառնաս:

Ստեփանը՝ որպէս շնորհակալութեան նշան՝ շարունակ գլուխ էր տալիս և շփոթուած ժպտում։ Նա բոլորովին խելքը կորցրել էր տեսնելով՝ թէ որքան զիրք պէտքէ ունենայ եւ ամեն մի զիրքը մի չոկ առարկայի մասին էր։

Նա վճռեց՝ որ իրանց տանեցոց յայտնէ ամեն ինչ կարգալուն այնքան էր ընտելացել որ այլես չէր կարող ճածուկ պահել։ Բայց այդ՝ ճնօղներից մի ամքողչ կոսպոց զիրք թաղցնելը դժուար էր։

— Խանումս տուեց... ասաց՝ Ստեփան, կարգա, կիսատ մի՛ թողնիլ կարող ես մարդ դառնալ, բացատրեց նա հօրը շինծու հանդարտութեամբ։

— Ասածիցդ էն է դուրս գալիս՝ որ խանումդ քեզ համար հօրիցդ լաւ է... յօնքերը կիած հարցրեց հայրը։ Փառք Աստծու, մենք ազատ մարդ ենք, ճորտ չենք, ուրիշների հրամանով չենք շարժւում... Տղայ, ես դիմեմ, վերը դու այդ յիմար բաներով զիսիդ մի փորձանք պէտքէ բերես։

Սակայն՝ սկզբում հայրն այդքանով էլ բաւականացաւ, որովհետեւ Ստեփանը ծոցից բըսան ոռւբլի հանեց զրեց սեղանի վրայ, մի այդքան էլ ծննդին էր բերել։

Այդ օրից ծերունիների ու շահիների մէջ

մի խուլ, յամառ կաիւ սկսւեց։ Հայրն այլես չէր կարող որդու հեա առաջուայ պէս կոպիտ վարուել, որովհետեւ՝ Ստեփանը բաւական փոխւել էր և նրանից այնքան չէր վախենում՝ ինչպէս առաջ ։ Շողիկն ամուսնու կողմն էր և պահում էր Ստեփանի բոլոր զրքերը։

Ստեփանը, առաջուայ նման՝ միայն աղաս ժամանակն էր զրքեր կարգում, որպէսզի ծնողներին զգովհելու առիթ չը տայ։ Առուածը նախանաշի ժամանակ էր կարգում, զիրքը հետր զաշտն էր տանում և երբ նստում էր հանգստանալու՝ դարձեալ կարգում էր։ Երբ տուն էր դառնում՝ զործը վերջացնելուց յետոյ անմիջապէս սկսում էր կարգալ։ Շատ անգամ էլ հաց ուտելիս էր կարգում։ Այդպիսի զէպքերում մայրը վրան բարկանում էր։

— Տօ, խելքը թացրած, գոնէ հացդ էլ է հանգիստ կե՛ր, յետոյ զբաղւիր այդ յիմար բաներով։

Եկաւ ձմեռը։ Ստեփանն աւելի շատ աղաս ժամանակ ունէր, ուստի և շատ էր կարգում։

— Տե՛ս, որդի, արդէն երկու երեխայ ունիս, զրքերդ նրանց հաց չեն տալ, ասում էր հայրը՝ երբ տեսնում էր՝ որ Ստեփանը կարգում է։

— Ինչի՞ ես ալդպէս խօսում, հայրիկ, ար-

դարանում էր Ստեփանը, խօմ ուրիշներից պակաս չէ՞մ աշխատում:

Բայց ձեք մասամբ՝ հօր նախատինքներին  
էր պատասխանում:

Շողիկն էր յաւ օրի չէր: Ակեսուրը շարունակ գտնդատում էր՝ թէ նա է իր որդուն խելքից հանում և միշտ երեսովն էր տալիս՝ թէ ազբատ ընտանիքից է, թէ նրան ոզորմութիւն են արել որ ուղել են իրանց տղին, իսկ նաև շնորհակալութեան փոխարէն՝ փչացնում է Ստեփանին:

Բնտանիքում գժգոհութիւնը քանի դնում՝ աճում էր և պարզ էր՝ որ ուրէ-ուր չէ փոթորիկը պիտի բարձրանալ: Այդ փոթորիկը ձմեռը բարձրացաւ: Ամենքը լիշում են այդ ձմեռը: Հայի թանկ ժամանակն էր, ամեն տեղ պակասութիւն ու կարիք կար:

Աշխատանք չկար: Շատերը քաղցածութիւն էին քաշում և վերցրել էին պանդխտութեան դաւագանը:

Ստեփանն էլ էր դնացել աշխատանք որոնելու, բայց ոչ մի տեղ յաջողութիւն չէր ունեցել և ստիպուած էր տուն դառնալ: Նրա առաջ եկաւ Շողիկը՝ լացով:

— Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, վախով հարցրեց Ստեփանը:

— Հայրդ ծեծեց: Ասում է՝ առնը սնդկի բանալին, այն լիմար գրքերը պէտքէ ոչնչացնեմ: Ես չը առւի նա էլ ծեծեց:

Ստեփանի սիրար կծկուեց:

— Լաւ, ներս գնանք կը մըսես:

Ճաշի ժամանակ էր, բայց մայրը հաշ չէր բերում: Մակարն էլ արելին էր շուռ ու մուռ տալիս: Ամենքը մի վատ բան էին նախազգում:

— Դործ դանը, հարցրեց Մակարը:

— Ո՞չ, հայրիկ, ոչ մի տեղ գործ չկայ, զլնացի նոյնիսկ իմ նախկին խանութի մօտ, նա էլ ասաց՝ որ արգէն ուրիշին է վարձել:

Զկայ... լաւ... կրկնեց Մակարը: Իշարկէ եթէ շարունակ գրքերի հետ ընկնես՝ գործ չի լինի: Ե՞հ, ինչ կայ որ... հօրդ վիզը հաստ է, նա կաշխատե, զուք կուտէք: Քեզ նման կին էլ նարեցիր, էլ ի՞նչ ես ուզում... ես նրան մի խօսք եմ ասում, նա ինձ՝ տասն է պատասխանում: Հիմա մարդ ձեղ լակոաներիդ հետ ձիւնի տակ պէտքէ զցէ՝ որ հասկանաք....

Հօր խօսքերը Ստեփանին ծանր եկան:

— Երեխաներն ի՞նչ մեղք ունին, խոնարհութեամբ նկատեց նա:

— Բաս ով է մեղաւորը, ե՞ս... ասա՛, ե՞ս եմ մեղաւոր... զոչեց ծերունին: Դուք լակա-

տաիք, իսկ ես՝ կերակրեմ, էտ ես ուղում  
ասել:

— Հայրիկ, մեզը է, ինչի՞ ես այդպէս խօ-  
սում, չէ՞ որ ես էլ եմ աշխատում:

— Ի՞նչպէս չէ... հայ տարեկան աշխատանքով  
միայն քեզ համար աղի կը բաւականանայ...  
Ամբողջ ուշեղ գրքերից ես տուել, մէկ գրանք  
ձեռքս անցնե՞ն...

Ստեփանը տաքացաւ:

— Այդ գեռ կը տեսնենք, վրայ բերեց նա  
կտրուկ ծայնով:

— Ի՞նչ... այս բոպէիս գնա՞ բեր, գոռաց  
Մակարը:

Ո՞չ չե՞մ բերի, ծայնը բարձրացրեց Ստեփա-  
նը և տեղից վերկացաւ:

— Բեր թէ չէ իսկոյն ամբողջ սնկուկի  
շարդ ու փշուր կանեմ, ասաց Մակարը և կա-  
ցինը ձեռքն առաւ,

— Իսկ ես՝ քեզ չարդ ու փշուր կանեմ.  
գոյեց Ստեփանը, համբերութիւնից գուրս ե-  
կած:

Մակարի ձեռքերը թուլացան: Մի բոպէ  
նա լուս նստած մնաց, ապա տեղից վերկա-  
ցաւ, հագաւ քուրքը:

Էհ, որդիս, շնորհակալ եմ, շնորհակալ,  
ասում էր նա խեղդուած ձայնով: Լու ես

վճարում հայրական աղ ու հացիս փոխարէն,  
շաւ շնորհակալ եմ:

Ստեփանը լուս էր:

Մակարը հանդարտ դուրս դնաց և դուռը-  
փակեց:

Մարեամն աչքերն էր տրորում և աղօթում:  
Շողիկը արտասուբով թրչում էր փոքրիկին,  
որ գրկում ընկած՝ քաշքցում էր նրա կուրծ—  
բը: Ստեփանը չը գիտէր՝ թէ հայրը ուր դնաց:

Նուտով սակացն պարզուեց Մակարի դուրս  
դնալու պատճառը. նա վերագարծաւ բերելով  
հետը գիւղի յարգուած ծերունիներին: Վերջին-  
ներս ծանր-ծանր ներս մտան և նստեցին նը-  
րանը ծօտ տասր հոգի էին:

Մակարը կանգնեց սենեակի մէշտեղը:

— Էհ, ծերունինե՛ր, իմ ու որդուս գտասա-  
տանը դուք արէք, ուղում էր փայտով գլու-  
խը շարգել նրա համար՝ որ իրան պահել, կե-  
րակրել, մէծացրել եմ:

Այս տսելով նա ծերունիներին խօնարհ զը-  
լուխ տուեց և արտասուեց:

Ծերունիները մօրուքները դըմբղմբացրին:

— Լաւ չէ... լաւ չէ...

Ստեփանը նոյնպէս տեղից վերկացաւ և զը-  
լուխ տուեց:

— Ինձ իմ մնողը գրկում է, վիրաւորում,

ալս ոչինչ բայց նա կնոշս ու երեխաներիս է տանից դուրս է զցու:

— Լաւ չէ, Ստեփի Շն, աւ չէ... զարձեալ կրկնեցին ծերունիները Փառք Ասածու, լաւ էք ապրում, ուրիշների ման սոված չէք, երեք ձի, երկու կով ունիք, էլ ինչին էք բաժան, ում...: Ապրեցէր ու քէֆ արէք, Աստուծուց շնորհակալ եղէք, իսկ դուք՝ կռւում էք, ինչու...

— Գրքերը փչացրին զրան, այն անիծած զրքերը, սկսեց գանգատուիլ Մակարը: Աշխատանքից յետ մնաց, ուտում-խմում է զրքերը ծեռքից վայր չի զցում: Էլ ես ինչին եմ այս տունը սարքել, ում համար...:

— Լսում ես Ստեփան, հա՞:

— Աղքեր շան, դուք ինքներդ էք տեսել՝ թէ ինչպէս եմ աշխատանքից յետ մնացել: Միշտ ամենքից շուտ եմ գնացել դաշտը և ամենքից ուշ վերադարձել: Իսկ զիրք կարդում եմ միայն աղատ ժամանակս: Հայրս ինձ խեղդում է, կնոշս ծեծում, զրկում է, վիրառում է:

Ծերունիները մտքի մէջ ընկան:

— Լաւ չէ, Ստեփան, լաւ չէ որ հակառակում ես, Աստուած կը պատժէ:

— Ես ինչ անիմ որ զիրք սիրում եմ, ա-

խար աչքերս այն ժամանակ բացուեցին՝ երբ կարգալ սովորեցի, յուզուած վրայ բերեց Ստեփանը:

Ծերունիները լուեցին:

— Այնուամենայնիւ՝ Ստեփան, հօր կամքին հակառակ գնալը լաւ չէ: Խոնարհիր, բարեկամ, խոնարհիր, հպարտութիւնդ կոտրի՛ր: Հօրդդ սիրուն էլ բար չէ, նա էլ կը զիջանի:

— Ես միշտ պատրաստ եմ հնագանդւելու միայն թէ՝ նա զրքերիս ձեռք չտայ:

Մակարը տեղից վեր թռաւ:

— Երբէ՛ք, այդ երբէք չի լինիլ, ես քո բոլոր զրքերը պէտքէ պատրաստեմ, զրանց, այդ անիծուածների պատճառով է որ ես որդուցս պէտքէ զրկուեմ:

— Իսկ ես՝ քէ՛զ կը խփեմ՝ եթէ զրքերիս ծեռք տաս, հանդարտութեամբ, բայց կտրուկ պատրասիանեց Ստեփանը:

Ծերունիները կշամքելով՝ զլուխները շարժեցին:

— Այդ դու հօրդ ես սպառնում... Այ դու... վրայ հասաւ ծերուկներից մէկը Ստեփանին, բայց միւսները յետ քաշեցին:

— Զէ, խօսեց մի ուրիշը, սրանց պէտքէ բաժանել... միասին չեն կարող ապրել:

— Այս բոպէիս լոկոտներիդ չետ տանի-

յըս դուրս կորիր, դոչեց Մակարը կատաղած:

Սահմանը լուս ու մունջ հագաւ շորերը, Շողիկն էլ՝ արտասուքն աչքին՝ պատրաստում էր:

— Իսկ աշխատանքիս համար ոչ մի վարձ չե՞ս տալ, հայրիկ, խոնարհութեամբ հարցրեց Ստեփանը:

— Ինչու պէտքէ տամ, բոլորն էլ ի՞մն է, բոլորը ե՞ս եմ աշխատել, գնա՞ւ, կորիր, գեռ այդ էլ շատ է որ շորերը հագիդ եմ թողնում:

— Այս, Մակար Աստծուց վախեցիր. մէջ մտաւ Մարեամը, տեսնելով թէ որպիսի անդրթութեամբ է վարդում ամուսինը որդու հետ, մեղք ես անում որ հարազատ որդուդ անիծում ես, Աստծուած ինքը դատաստանը կանէ...

Մակարը ծանր շունչ քաշելով նստեց:

Ստեփանն ու Շողիկը երեսները խաչակրն-քեցին, խորը պլուխ տուին ժերու կներին և դուրս գնացին:

Զ.

Երեկոյ էր: Փչում էր յուրա քամին: Զիւնը փաթիլ - փաթիլ զեաին էր թափւում: Ստեփանն ու Շողիկը տիսուր դէմքով դնում էին

փողոցով: Ստեփանը տանում էր սնվուկը և մեծ որդուն, իսկ Շողիկը՝ փոքր որդուն ու շորերի կապոյր: Քամին փչում էր ուղղակի նրանց երեսին և Շողիկի արցունքները սա-ուցնում երեսի վրայ:

Երեւում էին ամբողջ գիւղի ճրագները: Ստեփանը ընտանիքով գնում էր աներոջ մօտ՝ որը գիւղի ծալրին էր ապրում: Նրա խրճիթը մուտլ նայում էր եկողներին:

Աները կանգնած էր դռանը: Ստեփանն ու Շողիկը անհամարձակ մօտեցան ու բարեեցին:

— Մենք... հայրիկ... քեզ մօտ ենք գալիս... շփոթուելով ու կակագելով ասաց Շողիկը:

— Լսել եմ, ինձ պատմել են, լաւ չէ... շնորի մեզ ծերունիներիս կենդանի - կենդանի փոսք կը ծգէք... լաւ չէ... ինամուս հետ ես չեմ ուզում խոռվել, շատ ժամանակ չէ որ ցորեն եմ պարտք վերցրել:

Այս ասելով ներս մտաւ դուռը փակեց:

Ստեփանն ու Շողիկը կանգնած աեղերում քարացան — մնացին:

— Մայրիկ, յուրա է, ներս գնանք, չեկեկաց մեծ աղան:

Նրանք քայլերն ուղղեցին դէպի եկեղեցին:

— Բարեկ, Ստեփան, ծայն տուեց մի բարձրահասակ շահիլ զիւղացի, Ստեփանի ընկերը

— Այդ ինչի՞ շորերդ ձեռքերիդ կանգնել էր դուրսր ցրահն։ Ստեփանը պատմեց, ինչ որ պատահել էր։

— Այդպէս, հա... Ոուրեմն՝ հիմա աներոջի մօտ կը գնաս։

Ստեփանը դառնութեամբ ժպտաց։

— Դուռը երեսներիս զարկեց, ներս չընդունեց։

Սիմոնը, այդպէս էր ընկել ոչ անունը, դլուխը շարժեց։

— Տեսնում ես... ծերունիներն իրար պաշտպանում են, եկէք, եկէք ինձ մօտ։

— Չղիտեմ... ինչ...

— Ի՞նչ չփիտես, գնանք, խօմ առւնս չէք մաշի, այս մութ զիշերով, երեխաները զրկերիդ ուր պիտի գնաք։

Անհամարձակ քայլերով Ստեփանն ու Շողիկը մասն օտարի խրճիթը Կարծես հէնց զիտմամբ՝ փոքր երեխան էլ ամրող զիշերը նղնում էր և տանտէրերի քունը խանգարում, թէկ մայրն ամեն միշոց դորժ էր գնում որ նրան լռեցնէ։ Վերջապէս՝ յուսահատուած՝ ինքը Շողիկն էլ սկսեց հեկեկալ։

Շատ ծանը ժամանակ էր Ստեփանի ու Շողիկի համար։ Ոչ փող ունէին, ոչ հաց, ոչ էլ կարդին հազուստ։ Բացի այդ՝ աշխատանք էլ

չկար։ Միմոնը, տեսնելով ընկերու անել զրութիւնը, մտածեց Մակարին զիմել և որդու համար օդնութիւն խնդրել, բայց նա խեղնին մի լաւ հայհոյեց ու «սրիկայ» անուանելով տանից դուրս արեց։ Մի շաբաթ Ատեփանն ու Շողիկը հարեանների բերած հացով էին կերակրում, բայց շուտով հացն այնպէս թանկացաւ՝ որ ամենքն էլ պակասութիւն դգացին։ Օգնութիւնը դադարեց։

Ստեփանը մտածութեան մէջ ընկաւ։ Նրա դրութիւնն այլևս անտանելի էր։ Կամ կնոց ու երեխանների հետ պէտքէ մեռնէր, կամ հաց հարելու միջոց գանէր։

Այդպիսի մտածմունքներից զիշերը նրա քունը փափառ էր առաջաւ։ Պուրս եկաւ խրճիթը և վնաեց դարձեալ պանզիստութեան զիմել։ Կարելի է ընտանիքը կերակրելու մի հնար գանէր։ Գրնում էր հարեան զիւղը, մտքերը՝ մէկը միւսից սկսեալ, մէկը միւսից յուսահատեցուցիչ՝ պաշարել էին նրան։ Տեսաւ՝ որ աննկատելի կերպով հասել է հարեան զիւղը։

Զմեռային երկոտ արել գուրս էր եկել ամպերի տակից։ Գիւղը՝ քնից զարթած՝ շտապում էր եկեղեցի՝ որի զանգերը հնչում էին բաղըր զողանչով և մարդոց հրաւէր կարդում Աստուծոյ հետ խօսելու...

Զանկի ծայնը Ստեփանին դարթնացրեց իր հոգեկան բնից. լանկարծ նրան թուաց՝ որ իր բոլոր մտածմունքները լիմարութիւն են և անխելքութիւն, որ Աստուած ոչ մի աշխատաւորի սոված չի թողնի՝ եթէ աշխատաւորը յուսահատուի և ձեռքերը ժայտած չը նստի... Նա երեսը խաչակնքեց և քայլերն ուղղեց դէպի եկեղեցին: Այսաեղ երկար ազօթում էր և մտածում. —

— Ենորհակալ եմ Քեզնից, Աստուած, որ միտքս լուսաւորեցիր, ասաց եկեղեցուց դուրս դալով: Խնչու պէտքէ ես սոված մնամ քանի որ կարգալ-զրել դիտեմ: Կը գնամ զիւղերը, ծերունիների, աստուածասէր մարդոց համար Աւետարան կը կարգամ, նրանց մէջ Աստուածոյ խօսքը կը տարածեմ, լաւ-լաւ զրեր, պատմութիւններ կը կարգամ, կը պատմեմ. նամակներ կը դրեմ... Որքան մարդիկ կը լի- կամ զինուոր գհացած որդուն, եղբայրներին, ամուսիններին նամակ զրել, բայց անզրադի- տութեան պատճառով չեն կարողանում զրել... Որքան մարդիկ կան, որոնք կարգալ չգիտեն, ուզում են սովորել, բայց ինչպէս ես՝ սովորեց- սովորեցնեմ: Միթէ չէմ կարգալ կը

թէ ուրիշներին օգտակար լինել և թէ ըն- տանիքս պահել...

Այդ օրուանից Ստեփանը ոտք դրեց մի նոր կեանք, որի մասին ինքը երազած անզամ չէր: Կարծ ժամանակից յետոյ՝ նա շրջակայ զիւղե- րում յայտնի դարձաւ: Իրա շրջապատող հա- սարակութեան համար ամենակարեոր մարդը եղաւ և ամեն մի դիւզացի առանց քաշուելու դիմում էր նրան. — որը նամակ էր գրել տա- լիս և միքանի ծու բերում որպէս վարձա- արութիւն, որը գիրք էր կարգալ տալիս, որը կարգալ էր սովորում և ալիւր, հաց կամ փող տալիս: Եատերի համար՝ խնդիր էր հարկա- ւոր գրել, շատերի համար՝ հաշիւ պատրաս- տել և ալին, և ալին: Եւ Ստեփանը յօժարու- թեամբ ու սիրով կատարում էր ամենքի խրն- գիրը առանց խօսելու վարձատրութեան մա- սին. շատ-շատերից նա ոչինչ չէր վերցնում, շատերի տուածից հրաժարում էր՝ տեսնելով որ չըաւոր են: Բայց ամենքին էլ միակերպ սիրով օգնում էր իր ոլժերը ներածին չափ: Ամենքը նրան հաւատում, յարգում և սի- րում էին:

Սակայն՝ այդ ժամանակները Ստեփանին դարձեալ մի զժքախառութիւն պատահեց. — Նա ճանապարհորդութեան ժամանակ մրսել էր

և երբ առւն եկաւ՝ հիւանդացաւ, անկողին ընկաւ։ Դարձեալ Շողիկի համար սև օրեր վրայ հասան։ Նա ծախեց իր քուրքը հիւանդին հաց ու կերակուր գնելու համար։ Սակայն՝ Ստեփանը ոչինչ չէր ուտում, չուր էր խմում և անքում...»

Որքան արցունք թափեց այդ օրերը խեղճ կինը։ Արդէն ամենքը Ստեփանին մեռած էին համարում և սպասում էին թէ ահա այս է, այս չէ՝ մարմինը բոլորովին կը սառչի։

Լսելով որդու հիւանդութիւնը՝ Սակարի սիրոն էլ փափէց։ Նա երկու փութ ալիւր, մի փութ կորկոտ և տասը ֆունտ միս ուղարկեց՝ որ որդու թաղումից յետոյ հարեան, ներին «Հոգու հաց»—«քելեխ» տան։ Բայց ոչ ինքը եկաւ, ոչ էլ կնոջը թողեց որդու մօտ գնալու։ Շատ սպաց Մարեամը, զլուխը ծեծեց, բայց ոչ մի օգուտ չունեցաւ։

Սակայն՝ Աստուած ալ կերպ էր անօրինել։ Շողիկը մտածեց՝ վերջին փորձն էլ անել՝ և քաղաքից բժիշկ կանչել։ Այդպէս էլ արաւ։ Բժիշկ եկաւ, տեսաւ հիւանդին, գեղ տուեց և պատուիրեց որ լաւ կերակրէն։ Իսկ իր այցելութեան համար ոչ մի վարձատրութիւն չը վերցրեց։ — Բարի մարդ էր երեսում այդ բր-

ժիշկը։ — Երկար խօսեց Շողիկի հետ, մանրամասն հարցում փորձ արեց, զանազան խրատներ ու խորհուրդներ տուեց և՝ յուսադրելով որ Աստուած կօգնէ՝ հեռացաւ, նոյնիսկ չուզեց Շողիկից շնորհակալութեան խօսքեր լսել։

Շողիկը ճշտութեամբ կատարեց բարի բրձրշկի պատուէրները։ Ինչ որ Ստեփանն աշխատել էր վերջին ժամանակները՝ բոլորը ծախեց, և ամեն օր մաեղէն կերակուր էր պատրաստում ամուսնու համար։

Աստուած օգնեց։ Ստեփանը կարծես կենդանանում էր և ոյժի գալիս։ Ո՞րքան հիւանդ Ստեփաններ մահից կաղատուէին՝ եթէ ամեն զիւզում, կամ զոնէ միքանի զիւզերի համար մի զիւզական հիւանդանոց լինէր և բժիշկ պահուէր։

Մի անգամ զիւզում հասարակական ժողով կար. հաւաքուել էին հարկերի ու տուրքերի մասին խօսելու։

— Աղբէր, խօսեց զիւզի տանուտէրը, ինձ թուում է՝ որ մենք անարդարութիւն ենք արել. մեր շահիլները պէտքէ ասեն, — աե՛ս, Ստեփանն իր հօր տանն աշխատեց-աշխատեց, բրտինք թափեց, բայց վերջը ծերունիները հաւաքուեցին ու նրան հօր տանից զուրս զրցեցին, մի օր էլ մե՛զ եղակս կանեն, էլ ինչի՞

աշխատենք... Աղբէր, իմ խելքն էնպէս է կտրում՝  
որ չահիներն իրաւունք ունին էդպէս մտածերու...  
հը օրէնքի ու խղճի դէմ չչ Մակարի արամը....  
Ծերունիները պատասխանեցին. —  
— չա, կարծես... այնպէս է... արդար չէ...  
օրէնքով չէ...  
Եւ գնացին Մակարի մօտ:

— Դու այժմ պառաւիդ հետ մենակ ես,  
իսկ ձեր հողը չորս հոգու համար է: Քո որ-  
դին էլ հիւանդ է, երեխաներ ունի, կին ունի,  
խեղճն ի՞նչ անէ... Պէտքէ հողիդ կէսր քու սեր-  
մով ցանես, նրան տաս:

— Ինձ ի՞նչ... ինքն է գնացել: Խօմ ես չեմ  
դուրս արել: Թող հանդիսա ապրէր, խելօք լի-  
ներ. իմ ի՞նչ պարաքն է ուրիշի երեխաներին  
պահէլը:

Շատ զիմազրեց Մակարը, բայց զիւղացի-  
ներն ստիպեցին որ հողի կէսն ու սերմացուն  
տայ որդուն:

Երբ տանուտէրը գնաց Շողիկին յայտներու  
որ հողաբաժին են ստացել՝ վերջինս անչափ  
ուրախացաւ:

— Բայց ես այդ հողն ի՞նչպէս վարեմ —  
ցանեմ, ամուսինս զեռ պառկած է, ոչ ձի  
ունենք, ոչ եղ. տիրութեամբ հարցրեց Շողիկը:  
Բարի տանուտէրը դրան էլ ճար արեց: Հա-

ւաքեց հարեաններից մի քանի հոգի, ամենքը  
եկան իրանց անասուններով, գործիքներով, մի  
օրու վարեցին, ցանեցին և բարի գործ կա-  
տարած՝ հանդիսա խղճով և ուրախ սրտով  
գնացին իրանց տները:

Շատ ժամանակ չանցած՝ Ստեփանն էլ ա-  
ռողջացաւ. իսկ հնձի ժամանակ՝ արդէն բոլո-  
րովին առողջ էր և եռանդով ու լի յուսով՝  
սկսեց հունձը:

Նոյն այդ օրերը նրա մայրը, Մարեամը վախ-  
ճանուեց: Մակարը մնաց մեն - մենակ: Եւ դար-  
դից՝ սկսեց հարբեր: Եղեսուն տարի շարու-  
նակ աշխատել — հաւաքել էր, այժմ վաթ-  
սուն տարեկան հասակում երկու ամսուայ մէջ  
բոլորը վատնեց: Ընկերներ էլ շատ ճարուեցին:  
Եւ նա, հարուստ գիւղացին՝ այժմ չքաւոր  
դարցաւ... Եւ ի՞նչպէս չը հարբեր. — լոլոր  
տանն ինքն էր ու կատուն... Եւ սկսեց որդու-  
մասին մտածել. — տանը կին էլ կը լինի, հի-  
մայ նոյն իսկ շապիկը լուացող չկայ... Վատ չի  
լինի՝ որ երեխէքն էլ իրանց վազվողով ու  
աղմուկով խրճիթը կենդանացնեն....

Եւ նա եկաւ Ստեփանի մօտ: Ստեփանն ու  
Շողիկը երեխաների հետ ճաշում էին: Մակա-  
րը երեսը խաչակնքեց ու նստեց: Ամենքը լլ-  
ուցին, ամենքը սպասում էին:

— է՛հ, Ստեփան, մայրդ մեռաւ, ևս էլ շատ  
երկար չեմ ապրելու, որդի՛ս, թեղ է՛լ է մեղ-  
քը գալիս, Շողիկին է՛լ, երեխաներին էլ... Աիր-  
արս բոլորովին կոտրւել է... Մայրդ մահից ա-  
ռաջ քեղ համար խնդրեց: Արի, որդի, հօրդ  
տունը, անցածն անցել է, սրանից յետոյ Աս-  
տուած բարին տայ:

Խօսում է Մակարը, բայց գլուխը քարշ է  
զցել, գետնին է նայում, կարծես այնտեղ  
նկարներ կան:

Ստեփանը սեղանից վեր կացաւ և հօրը խո-  
նարհ դոււխ տուեց. նա՛ էլ այս մի տարում  
շատ էր տանջուել: Տայրն էլ արտասուեց, ե-  
րեխաներն էլ...

— Աղջի՛կս, ների՛ր որ քեղ էլ վիրաւորել  
եմ, ասաց Մակարը հարսին:

— Իսկ զբքէ՞րս, հալրի կ' հարցրեց Ստեփանը:  
— է՛հ, որդի, Աստուած քեղ հետ, ևս շատ  
չեմ ապրելու, սրանից յետոյ քո դորձերին չեմ  
խառնուիլ:

Նոյն օրը Ստեփանն իր ընտանիքով յետ  
դարձաւ հալրական տունը:

Եւ ամբողջ այդ օրն անցաւ հանդիսաւ, խա-  
ղաղ, կարծես մեծ պաս լինէր:

է.

Շատ չանցած՝ արդէն ամենքն իրար ընտե-  
լացան: Երեխաներն սկսեցին ծիծաղել, Շողի-  
կըն սկսեց երգել: Ստեփանն ազատ շունչ քա-  
շեց և վճռեց զլուխ բերել ինչ որ վաղուց միտ-  
քըն էր զրել:

Նա երկար ժամանակ էր սովորել, բայց չղի-  
տեր՝ թէ ո՞րքան բան վիտէ: Պէտք էր մի լու-  
մարդ նարել որ նրան քննէր, նրա գիտեցածը  
ստուգէր:

Ստեփանը կարծում էր՝ որ այդպիսի մարդ  
կարող էր այն գիւղի ուսուցիչը լինել՝ որտեղ  
շրջելու ժամանակ՝ ինքը եղել էր, որովհետեւ  
այդ ուսուցիչն ամենքը դովում էին և օրհնում:

Կիրակի օր Ստեփանը տաք հաղնուեց և  
ճոնապարհ ընկաւ լիշեալ գիւղը՝ որ քսան  
վերստ հեռու էր:

Ուսուցիչը ուսումնարանումն էլ ապրում  
էր: Երբ Ստեփանը եկաւ նրա մօտ՝ զեռ կէ-  
սօր չէր եղել:

Սենեակի ցրառւթեան պատճառով ուսուցի-  
չը մըսել էր և ախորժակով թէյ էր խմում:  
Նուրբ զիմագծերով, բարի գէմքով՝ քսանհինդ  
ատրեկան երիտասարդ էր նա: Աչքերի արտա-  
յայտութիւնը՝ խոնարհ ու մտնկական նա լը-

սում էր իր եղբօր արած պատմութիւնը:  
Եղբայրը քաղաքից նոր էր եկել և այնաեղի  
գիմնազի ուսուցիչն էր:

Ստեփանն սկզբում շփոթուեց, բայց դիւղա-  
կան բարի ուսուցիչն այնպէս սիրալիր ժրպ-  
տաց՝ որ նա իսկոյն ուղղուեց:

— Նսախ'ր, եղբա՛ր, առաջ մէկ նստի՛ր, հրա-  
վիրեց ուսուցիչը աթոռոր մօտ քաշելով: Ստե-  
փանը նստեց աթոռի ծայրին:

— Ո՞րտեղացի ես, հարցրեց ուսուցիչը:  
Ստեփանը պատասխանեց:

— Ես իմացայ որ այստեղացի չես: Խմի՛ր,  
խմի՛ր թէյրդ, մրսած կը լինես, ճանապարհից  
ես գալիս: Շատ է հեռու մեր դիւղը, քանի՛  
ժամում հասար:

— Ես ոտքով եկայ:

— Ոտքով, երեկ այստեղ դորձ ունիս:  
— Այս, մի փոքր դորձ...

— Ո՞վ զիս է՝ դիւղական դատարանն ես եկել:  
— Ո՞չ, ձեզ մօտ, պարո՞ն վարժապետ:

— Մի՞թէ, զարմացած հարցրեց ուսուցիչը:  
Ասա եղբա՛ր, ասա տեսնենք, ի՞նչ բանով կա-  
րող եմ ըեղ օգնել, խօմ ուփորել չես ուղում,  
հարցրեց ուսուցիչը և ծիծաղեց:

— Զէ, ո՞րտեղից... իմ ի՞նչ սովորելու ժա-

ժանակն է... արդէն երկու որդի ունիմ: Զէ,  
ես այնպէս եմ եկել:

Ստեփանը բաժակը դրեց սեղանին և ցած  
ծայնով տապաց: —

— Աստուած գլուխս մտցրեց՝ թէ արի  
կարդալ - գրել սովորի. և ահա արդէն չորս  
տարի է սովորում եմ, բայց չպիտեմ թէ ար-  
դեօք այնպէս եմ սովորում ինչպէս հարկա-  
ւոր է. ոչ ոքից չէի կարող խորհուրդ հար-  
ցնել... Ողորմած եղէք, պարոն վարժապետ,  
ինձ ըննեցէք:

Վարժապետի եղբայրը, գիմնազի ուսուցի-  
չը զլուխը բարձրացրեց: Նա մինչեւ այդ՝ ու-  
շագրութիւն չէր դարձել Ստեփանի վրայ:

— Լաւ, հիանալի, գեղեցիկ, ժպտալով ա-  
սաց վարժապետը. թէյրդ խմիր՝ յետոյ կը  
քննեմ, թէ չէ կը պազի: Պատմիր տեսնենք,  
ի՞նչպէս ես սովորել:

— Ի՞նչպէս... Ժածուկ, գողի նման, ասաց  
Ստեփանը և երկու եղբայրներին պատմեց իր  
ախուր պատմութիւնը:

Երկուսի վրայ էլ այդ պատմութիւնը խոր  
տպաւորութիւն թողեց: Մի րոպէում Ստե-  
փանը նրանց աչքում մեծացաւ, հերոս դար-  
ձաւ: Նրանց առաջ կանգնած էր ոչ թէ վաշ-  
խուռու դիւղացի, որը դրազիտութիւն է սո-

վորել իր հաշիւները լաւ պահելու համար,  
այլ՝ իրանց առաջ կանգնած էր մի նոր մարդ,  
որի նմանը պատճութեան մէջ քիչ կայ և որի  
նման եղել են միայն երկելի մարդիկ:

Վարժապետն սկսեց Ստեփանի հետ շատ  
յարդանքով վարուել և նոյնիսկ՝ «Պարոն Ստե-  
փան» ասել: Նա քննեց ինքնուս գիւղացուն,  
տեսաւ որ շատ լաւ կարդում էր, թուաբա-  
նական խնդիրները հեշտութեամբ էր վճռում,  
թէև՝ պակասութիւններ էլ շատ ուներ:

— Շատ լաւ է, հիմնալի է բարեկամս, ա-  
սաց վերջապէս ուսուցիչը, միայն՝ պէտք է քե-  
րականութիւն սովորես:

— Իսկ սովորելուց յետոյ ի՞նչ ծառայու-  
թեան պէտքէ մանես, հարցրեց քաղաքացի  
ուսուցիչը:

— Ոչ մի, կմկմալով պատասխանեց Ստե-  
փանը, միայն թէ՝ սովորէի:

— Բանն էլ հենց այն է՝ որ այլպիսի պայ-  
մաններում, որոնց մէջ զու ես դանւում, չես  
կարող սովորել Քանի առարի է սովորում ես:  
— Զորս:

— Տեսնում ես, եթէ կանոնաւոր կերպով  
սովորէիր՝ այլ բոլորը մի առօրւայ բան էր:  
Ապա նա խօսքը դարձրեց եղբօրը, —

— Որքան նպատակալարմար կը լինէր՝ եթէ

դիւզերում ֆրեթեան գասընթացքներ բաց-  
ուէին, կամ շրջիկ ուսուցիչներ լինէին, կամ  
վերջապէս՝ ամեն գրադէա մարդ երկու-երեք  
հոգու կարդալ սովորեցնէր — գոնէ սրա նման  
ուսումնածարաւ գիւղացիները կը յագեցնէին  
իրանց ժարաւր: Ասում ես՝ չորս տարի ես սովո-  
րել, կրկին դիմեց նա Ստեփանին, չէ, եթէ ու-  
ղիղ որ՝ ուղում ես մի բան սովորել՝ առայժմ  
պէտք հոգի թողնես: Յետոյ կարող ես նորից եր-  
կրագործութեամբ պարապել, իսկ այսպէս՝ ոչ

կրագործութիւնը պարապել, իսկ այսպէս՝ ոչ  
հողագործ կլինիս ոչ էլ կարգին ուսումն կունենաս:

— Բայց ի՞նչպէս սովորիմ, գրագիր դաս-  
նամ որ այնտեղ սովորեմ:

— Զէ, բարեկամս, գրագորութիւն անելով  
բան չես սովորիլ, գրագիրները մեծ մասամբ  
խարեւաներ են, փչացած, վնասակար մարդիկ  
են, այնտեղ դու էլ կը փչանաս:

— Բաս ուր գնամ, ոչ մի տեղ չգիտեմ:

— Գիտե՞ս ի՞նչ... յանկարծ վրայ բերեց քա-  
ղաքացի ուսուցիչը, — արի ինձ հետ գնանք  
քաղաք, այնտեղ առայժմ դիմնալում ծառա-  
մաիր, թէև ոռնիկը քիչ է, բնդամենը ամսա-  
կան տասը ուուրիի, բայց աշխատանք էլ շատ  
լինիլ, խօմ աշխատելուց չե՞ս փախչում: Օ-  
չի լինիլ, խօմ աշխատելուց չե՞ս փախչում: Օ-  
րական չորս ժամ հագիւ գործ կունենաս, իսկ  
յետոյ՝ ամբողջ օրն ազատ կը լինէս և ժամա-

նակ կունենաս պատրաստուելու — զիւղական ուսուցչի քննութիւն տալու: Ես էլ կօդնեմ, մեր ուսուցիչներն էլ, աշնանն արդէն ուսումբար վերջացրած կը լինես: Հը... համաձայն ես: Ուրախութիւնից Ստեփանի ոտքերը գետնից կարուեցին, — Ե՛ւ ամսական տասր ռուբի ռոճիկ, և' ազատ ժամանակ, և' ուսուցիչ ու պարապելու յարմարութիւն... այս բոլորը միանգամբից...:

— Համաձայն ես, կրկնեց ուսուցիչը:

— Տ' էր Աստուած, այն էլ ի՞նչպէս... յուղուած պատասխանեց Ստեփանը: Չոքէչոք կը դամ մինչև քաղաք, միայն թէ՛ այլպէս անէք:

Մի քանի օր յետոյ՝ Ստեփանն արդէն քաղաքում էր:

Նա գիմնազում ծառալ մտաւ: Բարեկամ—ուսուցիչը տարաւ նրան իր մոտ, յօժարեցաւ բնակարան ու կերակուր տալ այն պայմանով՝ որ Ստեփանը իրան էլ ծառայէ:

Ալդ տարին Ստեփանի կեանքի ամենափայլուն շրջաններից մէկն էր: Ուսումբ լաւ էր առաջ գնում: Մի ձմեռուալ մէջ տնցաւ բոլոր հարկաւոր առարկաները: Ամբողջ գիշերներով նա գրքերի հետ էր լինում, այնպէս որ՝ շատ

անգամ ուսուցիչը նրան արգելում էր այլքան պարապելը:

Ստեփանը միայն չոր ու ցամաք գիտութիւններ չը սովորեց, նշա հասկացողութիւններն էլ փոխուեցին, իզուր չէր՝ այնպիսի աղահութեամբ ու լարուած ուշադրութեամբ լսում ուսուցիչների վիճաբանութիւնները՝ որ շատ անգամ տեղի էին ունենում իրանց տանը, — անօգուտ չանցաւ նաև այն գրքերի ընթերցանութիւնը՝ որ նրան տալիս էր ուսուցիչը:

Գիւղ վերադառնալուց միքանի օր յետոյ՝ Ստեփանը գրեց իր բարեկամ ուսուցչին,—

«Ես արդէն դիւղումն եմ, կնոջս ու երեխաններիս մօտ: Այս աշխարհը յետ է ընկած ու խուար, բայց ժողովուրդը՝ լաւ է: Ամենքը զարմանում են որ ես հասարակ գիւղացուց վարժապետ դարձայ, որ իրանց նման հասարակ եմ հագնելում: Ես մտադիր եմ ուսումնարանս ընդունել ոչ միայն մանչը, այլև՝ աղջիկներ: Միտք ունիմ այս աշնան միքանի օրավար հող ցանել: Ալդ բանի մասին շատ մտածեցի, բայց վերջը վճռեցի՝ որ լաւ չէ երբ մարզը

Հողից կտրւում է: երկրագործութիւնը  
ամենասուրբ, ամենազնիւ աշխատանքնե-  
րից մէկն է քանի որ մարդագարի դոր-  
ծարաններ չկան: Եւ մարդը ազատ կր-  
լինի, և ոչ ոքից կախում չի ունենալ:  
Դարնանը ուսումնարանիս կողքին մի  
պարտէղ պէտք է շինեմ որ աշակերտներիս  
սովորեցնեմ թէ ի՞նչ ձեռվ կարելի է հո-  
ղից շահուել և ի՞նչպէս անել՝ որ շատ  
օգուտ սաւացուի:

Բարեսիրտ, կրթուած բահանայ, շար-  
ժական գրադարաններ, լրջիկ գրավաճառ-  
ներ, սրտացաւ բժիշկ, — այս բոլորը գիւ-  
ղի անյետածղելի պահանջներն են՝ որ կա-  
րող են կատարելապէս լեզափոխել նրա  
կեանքը և լոյս ճանապարհ հանել տղէտ  
գիւղացիներին:

Առանձնապէս ինձ մի հարց է զբա-  
ղեցնում՝ թէ արդեօք պէտքէ կարողա-  
նամ այնքան շահ բերել իմ եղբայր գիւ-  
ղացիներին, որքան ցանկանում եմ, թէ  
արդեօք պէտքէ կարողանամ օգտակար  
լինել հայրենակիցներիս. բայց ես չեմ յու-  
ղացիութեած, այդպիսի Սուրբ գործին  
լինել հայրենակիցներիս: բայց ես չեմ յու-  
ղացիութեած, այդպիսի Սուրբ գործին  
լինել հայրենակիցներիս:

7/11..1922




### Բժ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆԻ

- նոր լոյս տեսած զբքոյկները.
- Գործարան թէ երկրագործութիւն. . 15 կ.
  - Սնապաշտութիւն և կախարդութիւն 20 „
  - Մաերմական խորհուրդներ  
պատանիներին . . 20 „
  - Գոյութեան կոիւ . . . . . 20 „
  - Խուզութ Վիրխով . . . . . 25 „
  - Սէր և խանդ . . . . . 20 „
  - Պոռնկութիւն և անառակութիւն . 20 „
  - Նուէր հալ զինւորին (մամուլի տակ) „

### ՅՈՎՀԵՆՆԵՍ ԱՐԱՄԵԱՆՑԻ

- վերջին հրատարակութիւնները
- Ընտրութիւն կաթնատուների. . . 15 կ.
  - Խուզութ Վիրխով . . . . . 25 „
  - Հպարտ հոգու երգերից . . . . . 30 „
  - Հ. Համբարձումեան

Դիմել հալ գրավաճառանոններու:



ՀՀ Ազգային գրադարան

NL0315950

ՄԵՐ ԷԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ

- |    |                               |       |
|----|-------------------------------|-------|
| 1. | Քարը երգում է . . . . .       | 10 կ. |
| 2. | Ճշմարիտ մեժութիւնը . . . . .  | 7 "   |
| 3. | Արդար ճեղունին . . . . .      | 10 "  |
| 4. | Մեծ տօն . . . . .             | 10 "  |
| 5. | Նոր լոյս . . . . .            | 10 "  |
| 6. | Ուսման սէրը . . . . .         | 7 "   |
| 7. | Մանկան մօտ և վերջին խօսք .    | 7 "   |
| 8. | Գեղեցկուհի Մարօ (մամուլի տակ) |       |